Արձանագրություն N2

<< ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման
գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

25 օգոստոսի 2017թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մխեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Հ. Խաչատրյան, Վ. Քեռյան, Վ. Բաբալարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյան

1. Հայտերի ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտվելու վայրը	Էլ. հասցե
1	<<Արալ>> ՍՊԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 49	Svetlana.harutyunyan@inbox.ru
2	<<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 22	info@bakertillyarmenia.com
3	<<Լիգա-Տեք>> ՍՊԸ	ք. Երևան, Պարոնյան 28/2	info@ligatech.am

Ընդունվել է որոշում կողմ՝5, դեմ՝0

2. Գնային առաջարկների ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները:

Չափաբաժնի համարը	Անվանում	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		Նախահաշիվ ՀՀ դրամ
			Գնի առաջարկը առանց ԱԱՀ	ԱԱՀ	
1	Գույքագրման ծառայություններ	<<Արալ>> ՍՊԸ	54000000	0	7500000
		<<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ	9500000	1900000	
		<<Լիգա-Տեք>> ՍՊԸ	9000000	1800000	

Ընդունվել է որոշում կողմ՝5, դեմ՝0

3. Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հիրմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի՝

3.1 41-րդ կետի՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել.

3.2 «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ–ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները և բացակայում էր հավելված 2-ը, փոխարենը armeps.am էլ. համակարգում կցված էր հավելված 2.1-ը:

3.3 «Արալ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտի հավելված 9-ում (Տուժանքի մասին համաձայնագիր) և ներկայացված լիազորագրում առկա են անհամապատասխանություններ Սվետլաննա Հարությունյանի անձնագրային տվյալներում, եթե նշված տվյալները լիազորագրում սխալ են, խնդրում ենք ներկայացնել լիազորագրի շտկված տարբերակը:

3.4 «Լիգա-Տեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում բացակայում էր հրավերի պահանջ հանդիսացող իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հավելված 2-ում սխալ էր լրացված մրցույթի ծածկագիրը:

Նշված կազմակերպություններին հանձնաժողովը առաջարկել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել հանձնաժողովի քարտուղարի ars.avagyan@parliament.am էլեկտրոնային հասցեին մինչև ս.թ. օգոստոսի 30-ը ժամը 11:00-ն:

3.5 40-րդ կետի 5-րդ ենթակետ բ) և գ) մասերի՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, քանի որ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության համար նախատեսված նախահաշվային գինը: Հետևաբար հիմք ընդունելով այն հանգամանքը , որ նիստին ներկա մասնակիցներ չկան՝ նիստը կասեցվում է և առաջարկվում է բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների սույն թվականի օգոստոսի 31-ին ժամը 11:00-ին /բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից 2-րդ և ոչ ուշ, քան 10-րդ աշխատանքային օրը/, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեով /ընդունարան/:

Ընդունվել է որոշում կողմ՝5, դեմ՝0

4. Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

2017 թվականի օգոստոսի 30-ին մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ-ն և <<Լիգա-Տեք>> ՍՊԸ-ն շտկել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել են նշված անհամապատասխանությունները: <<Արալ>> ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ իր կողմից ներկայացված հրավերի պահանջ հանդիսացող Հավելված 9-ում (Տուժանքի մասին համաձայնագիր) տեղի է ունեցել անձնագրային տվյալների վրիպակ:

Հանձնաժողովը որոշեց մերժել <<Արալ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրաց հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝5, դեմ՝0

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին

2017 թվականի օգոստոսի 31-ին միաժամանակյա բանակցությունների նիստին ներկա էր <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ-ի ներկայացուցիչը, որը միաժամանակյա բանակցությունների վարման ընթացքում առաջարկեց 11250000 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: <<Լիգա-Տեք>> ՍՊԸ-ն չէր ներկայացել միաժամանակյա բանակցությունների նիստին:

Ընդունվել է որոշում կողմ՝5, դեմ՝0:

6. Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրույթը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մխեյան

անդամներ՝

_____ Ա. Ավագյան

_____ Հ. Խաչատրյան

_____ Վ. Քեոյան

_____ Վ. Բաբալարյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավագյան